Հասցեատեր՝
«Արարատ ՖԱ» Հ/Ձ ՓԲԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararat.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08.05.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Նազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նազելի Արսենյան
	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	Կ-029
Խախտում՝	«Արարատ ՖԱ» Հ/Ձ ՓԲԸ կողմից ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ կետով սահմանված առնվազն մեկ ֆուտզալի թիմ ունենալու պահանջը չբավարարելը (Հավելված 1 Գ, 3-րդ կետ)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Արարատ ՖԱ» Հ/Ձ ՓԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2,000,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:

- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։